Կ-1299[10]-31.03.2026-ՖՎ-011

ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի 1-ին հոդվածում «վերակազմակերպման» բառից հետո լրացնել «, վերակառուցման» բառը:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդված 3-րդ մասի ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների սնանկության մասին» օրենքով և «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով» բառերով, իսկ ««Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների սնանկության մասին» օրենքով և «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 30-րդ հոդվածի «Չի թույլատրվում հիմնադրի կողմից ավանդի ներդրման պարտականությունից ազատում, այդ թվում՝ ընկերության հանդեպ նրա պահանջների հաշվանցմամբ:»: նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Չի թույլատրվում հիմնադրի կողմից ավանդի ներդրման պարտականությունից ազատում, այդ թվում՝ ընկերության հանդեպ նրա պահանջների հաշվանցմամբ, բացառությամբ Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտի համաձայն բանկի ընդհանուր կապիտալի կազմում ներառվող պարտավորություններ փոխարկման և «Բանկերի վերակառուցման մասին» օրենքի համաձայն ներքին աջակցության գործիքի կիրառման դեպքում պարտավորությունների դիմաց տրամադրվող բաժնեմասերի:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից: